ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
<<ԱՐԹԻԿԻ ՊԵՏԱԿԱՆ
ՔՈԼԵՋ>> ՊՈԱԿ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
АРТИКСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ
КОЛЛЕДЖ
REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORT
ARTIK STATE COLLEGE

ՀՀ Շիրակի մարզ Ք. Արթիկ, Տոնականյան 33, Հեռ./Тел./Tel.: /0244/ 5-27-57, /E- mail / qolej@mail.ru,
РА Ширакская область г. Артик, ул. Тонаканяна 33, Artik ,Tonakanyan 33

1 07 ՀՈՒՆՎԱՐ 2026Թ.
ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

ՏԻԿԻՆ Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻՆ

Հարգարժան տիկին Անդրեասյան

Տեղեկացնում ենք Ձեզ, որ <<Արթիկի պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ում անցկացվելու է մրցույթ՝ համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարության թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգի:

2025-2026 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում առաջացել է «Փոխադրումների կազմակերպումը և կառավարումը տրանսպորտում» մասնագիտության ներքոհիշյալ մոդուլների թափուր ժամեր:

1. Ավտոմոբիլային տրանսպորտի շարժակազմ-54 ժամ
2. Բեռների ավտոմոբիլային փոխադրումներ-48 ժամ
3. Ուղևորների ավտոմոբիլային փոխադրումներ-74 ժամ
4. Ավտոմոբիլային փոխադրումների ավտոմատ համակարգեր-54 ժամ
5. Միջպետական փոխադրումներ-54 ժամ
6. Բեռնագիտություն-36 ժամ
7. Ուս. պրակտիկա-120 ժամ
8. Արտադրական պրակտիկա-30 ժամ

Վերոնշյալ թափուր տեղի համար կարող է մասնակցել այն անձը, ով համապատասխանում է՝ տվյալ մասնագիտական պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջներին:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերն ընդունվում են մրցույթի հայտարարության հրապարակման օրվանից սկսած 10 աշխատանքային օրվա ընթացքում:
Մրցույթին մասնակցող անձը հարցազրույցի օրը պետք է ներկայացնի հետևյալ բնօրինակ փաստաթղթերը՝
Բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ:

Պահանջվող փաստաթղթերի ցանկը՝
▪դիմում,
▪կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
▪անձնագիր (բնօրինակը և պատճենը),
▪աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
▪ինքնակենսագրություն/Ձև 4/,
▪մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),

Այլ պետության քաղաքացիները ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ:

Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են 08.01.2026թ.-ից մինչև 21.01.2026թ ամեն օր ժամը 09:00 –ից մինչև 15:00:

Մրցույթի անցկացման օրը՝ 22.01.2026թ., ժամը՝ 13:00, վայրը՝ ք.Արթիկ Տոնականյան 33:

Հարցերի դեպքում կարող եք այցելել քոլեջ կամ զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ 0244-5-27-57:

Տնօրեն՝ Ա. Ղուլիջողյան